ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ապրիլի 2021 թվականի N 165-Ա

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԿԱՊԱՆԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2014 թվականի հունիսի 13-ի N 98-Ն որոշմամբ հաստատված կարգը և «Կապանի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2021թ. ապրիլի 13-ի «Մրցույթում հաղթող ճանաչելու մասին» N 4 որոշումը և եզրակացությունը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Արմինե Հովհաննիսյանին 2021թ. ապրիլի 16-ից ազատել «Կապանի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումից:

2. «Կապանի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար կայացած մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված Մելինե Մարտիրոսյանին 2021թ. ապրիլի 16-ից նշանակել կազմակերպության տնօրենի պաշտոնում՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով:

3. Կազմակերպությունում հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Գանդալյան Մերի	Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ (հանձնաժողովի նախագահ),
Ստեփանյան Թամար	Իրավաբանական բաժնի պետ,
Համբարձումյան Մարի	Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսա-տնտեսագիտական բաժնի ավագ մասնագետ,
Հովհաննիսյան Արմինե	«Կապանի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի նախկին տնօրենի պաշտոնակատար, հանձնող,

Մարտիրոսյան Մելինե	«Կապանի երկրագիտական թանգարան» տնօրեն, ընդունող:	ՊՈԱԿ-ի

4. Հանձնաժողովին՝ հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտել եռօրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

15.04.2021

X

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN MELIKSET 4108600096

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

2021թ. ապրիլի 15
ք. Կապան